# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
# « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-7/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ
# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «29» 04. 2019թ.
ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, Հ. Մելիքյան /ԳԱՊ/,
ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյան,
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ոսկանյան,
ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիք-լվացքատնային ապահովման բաժանմունքի ավագ ինժեներ, կապիտան Վ. Բարսեղյան:
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-7/3» ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Գ. Տերյան)

1. Մասնակիցների՝ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) մասնակցության իրավունքի իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-7/3» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակիցների՝ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) մասնակցության իրավունքի իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-7/3» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Գ. Տերյան)

***1.1 ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, «Մասիսի Գարուն Կ/Ֆ» ՍՊԸ և «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով չի գնահատվում/«ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ չի հանդիսանում ՀՀ ռեզիդենտ/:***

1.2 29.04.2019թ. որակավորման նիստի ավարտի օրը՝ հանձնաժողովը որոշեց «Մասիսի Գարուն Կ/Ֆ» ՍՊԸ և «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակիցներ և վերջիններիս անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Գ. Տերյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| **Գնահատող** | Հ. Մելիքյան |
| **Գնահատող** | Վ. Պապյան |
| **Գնահատող** | Գ. Ռիստյան |
| **Գնահատող** | Վ. Բարսեղյան |
| **Գնումները համակարգող՝** | Գ. Տերյան |